ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-708[1]-13.11.2023-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2005 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը «վերահսկողության» բառից հետո լրացնել «, հսկողության» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 6-րդ հոդվածում՝ «զ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 7-րդ և 7.1-ին հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

« Հոդված 7. Անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական լիազորված մարմինների իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական կառավարման լիազորված մարմին) իրավասություններն են՝

1) պետական անտառների տիրապետումը և օգտագործումը՝ սույն օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն.

2) պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

3) անտառների դասակարգումը՝ ըստ գործառնական նշանակության.

4) Հայաստանի Հանրապետության պետական անտառային տնտեսությունների վարման կազմակերպումը.

5) պետական անտառների անտառաշինական նախագծերի հաստատումը.

6) անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի սահմանումը.

7) անտառների կայուն կառավարման չափորոշիչների և ցուցանիշների հաստատումը.

8) անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերի և դրանց տրամադրման կարգի հաստատումը.

9) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի ցանկի հաստատումը.

10) արտակարգ իրավիճակների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևի սահմանումը.

11) պետական անտառներում բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղի հաստատումը.

12) Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի պետական հաշվառումը, անտառային պետական կադաստրի վարումը.

13) անտառների արտադրողականության բարձրացմանը, անտառավերականգնմանը, անտառապատմանը և խնամքին ուղղված նպատակային ծրագրերի մշակումը, իրականացման կազմակերպումը.

14) անտառային հողերի բերրիության բարձրացումն ու պահպանումը, դրանց նպատակային օգտագործման ապահովումը.

15) իրականացնում է անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի պահպանության, զարգացման և հավասարակշռման ուղղությամբ ծրագրերի մշակումը.

16) իրականացնում է անտառների և անտառային հողերի կայուն կառավարման վերաբերյալ ուսումնասիրություններ.

17) անտառների պետական մոնիթորինգի իրականացումը.

18) անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների՝ ապօրինի հատումների, ծառերի, թփերի, երիտասարդ տնկարկների և անտառային մշակույթների վնասման և ոչնչացման, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, կեղտաջրերով, կոմունալ-կենցաղային թափոններով անտառների աղտոտման և անտառային օրենսդրության այլ

խախտումների հայտնաբերման ու կանխարգելման կազմակերպումը և այդ մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմիններին տեղեկությունների անհապաղ տրամադրումը.

19) անտառների կայուն կառավարման բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը.

20) պետական, ինչպես նաև համայնքային անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական, պայթեցման, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների կատարման նպատակով հողերի նպատակային նշանակության փոփոխման, ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման համար թույլտվության տրամադրումը.

21) մշակում է անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրեր՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ.

22) կազմակերպում և հսկողություն է իրականացնում պետական անտառների անտառաշինության աշխատանքների նկատմամբ.

23) անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացնելու համար փաստացի ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություններ տրամադրելու նպատակով ստեղծում է մասնագիտական հանձնաժողովներ և եզրակացությունների համաձայն տրամադրում է թույլտվություն.

24) իրականացնում է անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումները, ֆինանսական ռազմավարության մշակումը, հատկացված ֆինանսական միջոցների կառավարումը, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստումը, պայմանագրերի կնքումը.

25) մշակում և իրականացնում է անտառային ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, զարգացման, սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում, ներդրումային ծրագրեր.

26) մշակում և կազմակերպում է անտառներում և անտառային հողերում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերը.

27) կազմակերպում է անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, անտառային տնկադաշտերի հիմնման, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումներ.

28) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա տրամադրում է համաձայնություն անտառավերականգնման, անտառապատման, անտառային ճանապարհների կառուցման և վերանորոգման նախագծերի, անտառային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ .

29) իրականացնում է անտառատնկարկներն անտառի շարք փոխադրելու գործառույթներ.

30) ներկայացնում է առաջարկություններ անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ.

31) օրենքով սահմանված դեպքերում տրամադրում է եզրակացություն արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին.

32) տրամադրում է համաձայնություն անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման համար.

33) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը, համաձայնության տրամադրումը.

34) իրականացնում է ծառայողների և անտառային ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը.

35) իրականացնում է գիտահետազոտական աշխատանքների, անտառային արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդնման կազմակերպումը.

36) իրականացնում է անտառային ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում՝ էկոլոգիական կրթության, աշխատանքների կազմակերպումը.

37) աջակցում է համայնքային անտառների ստեղծմանը և զարգացմանը.

38) ստեղծում է անտառային արդյունքի արտադրության և վերամշակման հզորություններ.

39) մշակում և իրականացնում է անտառօգտագործման, այդ թվում՝ հանգստի, զբոսաշրջության, էկոտուրիզմի զարգացման ծրագրեր.

40) աջակցում է ագրոանտառաբուծության զարգացմանը.

41) մշակում է անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհային անվտանգության միջոցառումների ծրագրերը.

42) սույն օրենսգրքով և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Բնապահպանական վերահսկողությունն իրականացնում է շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնինը:

Հոդված 7.1. Էկո պարեկային ծառայությունը

Էկո պարեկային ծառայության լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Հոդված 4. ՈՒԺը կորցրած ճանաչել Օրենսգրքի 26-րդ և 27-րդ հոդվածները:

Հոդված 5. ՈՒԺը կորցրած ճանաչել Օրենսգրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2005 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածը «վերահսկողության» բառից հետո լրացնել «, հսկողության» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 6-րդ հոդվածում՝ «զ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 7-րդ և 7.1-ին հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

« Հոդված 7. Անտառների կայուն կառավարման և վերահսկողության ոլորտում պետական լիազորված մարմինների իրավասությունները

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական կառավարման լիազորված մարմին) իրավասություններն են՝

1) պետական անտառների տիրապետումը և օգտագործումը՝ սույն օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն.

2) պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

3) անտառների դասակարգումը՝ ըստ գործառնական նշանակության.

4) Հայաստանի Հանրապետության պետական անտառային տնտեսությունների վարման կազմակերպումը.

5) պետական անտառների անտառաշինական նախագծերի հաստատումը.

6) անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի սահմանումը.

7) անտառների կայուն կառավարման չափորոշիչների և ցուցանիշների հաստատումը.

8) անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերի և դրանց տրամադրման կարգի հաստատումը.

9) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի ցանկի հաստատումը.

10) արտակարգ իրավիճակների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևի սահմանումը.

11) պետական անտառներում բնափայտի մթերման տարեկան հաշվարկային հատատեղի հաստատումը.

12) Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի պետական հաշվառումը, անտառային պետական կադաստրի վարումը.

13) անտառների արտադրողականության բարձրացմանը, անտառավերականգնմանը, անտառապատմանը և խնամքին ուղղված նպատակային ծրագրերի մշակումը, իրականացման կազմակերպումը.

14) անտառային հողերի բերրիության բարձրացումն ու պահպանումը, դրանց նպատակային օգտագործման ապահովումը.

15) իրականացնում է անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի պահպանության, զարգացման և հավասարակշռման ուղղությամբ ծրագրերի մշակումը.

16) իրականացնում է անտառների և անտառային հողերի կայուն կառավարման վերաբերյալ ուսումնասիրություններ.

17) անտառների պետական մոնիթորինգի իրականացումը.

18) անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների՝ ապօրինի հատումների, ծառերի, թփերի, երիտասարդ տնկարկների և անտառային մշակույթների վնասման և ոչնչացման, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, կեղտաջրերով, կոմունալ-կենցաղային թափոններով անտառների աղտոտման և անտառային օրենսդրության այլ խախտումների հայտնաբերման ու կանխարգելման կազմակերպումը և այդ մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմիններին տեղեկությունների անհապաղ տրամադրումը.

19) անտառների կայուն կառավարման բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը.

20) պետական, ինչպես նաև համայնքային անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված շինարարական, պայթեցման, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի և այլ հաղորդակցուղիների անցկացման, հորատման և այլ աշխատանքների կատարման նպատակով հողերի նպատակային նշանակության փոփոխման, ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման համար թույլտվության տրամադրումը.

21) մշակում է անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրեր՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ.

22) կազմակերպում և հսկողություն է իրականացնում պետական անտառների անտառաշինության աշխատանքների նկատմամբ.

23) անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացնելու համար փաստացի ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություններ տրամադրելու նպատակով ստեղծում է մասնագիտական հանձնաժողովներ և եզրակացությունների համաձայն տրամադրում է թույլտվություն.

24) իրականացնում է անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումները, ֆինանսական ռազմավարության մշակումը, հատկացված ֆինանսական միջոցների կառավարումը, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստումը, պայմանագրերի կնքումը.

25) մշակում և իրականացնում է անտառային ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, զարգացման, սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում, ներդրումային ծրագրեր.

26) մշակում և կազմակերպում է անտառներում և անտառային հողերում վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերը.

27) կազմակերպում է անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, անտառային տնկադաշտերի հիմնման, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումներ.

28) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա տրամադրում է համաձայնություն անտառավերականգնման, անտառապատման, անտառային ճանապարհների կառուցման և վերանորոգման նախագծերի, անտառային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ .

29) իրականացնում է անտառատնկարկներն անտառի շարք փոխադրելու գործառույթներ.

30) ներկայացնում է առաջարկություններ անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ.

31) օրենքով սահմանված դեպքերում տրամադրում է եզրակացություն արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին.

32) տրամադրում է համաձայնություն անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման համար.

33) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը, համաձայնության տրամադրումը.

34) իրականացնում է ծառայողների և անտառային ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը.

35) իրականացնում է գիտահետազոտական աշխատանքների, անտառային արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդնման կազմակերպումը.

36) իրականացնում է անտառային ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում՝ էկոլոգիական կրթության, աշխատանքների կազմակերպումը.

37) աջակցում է համայնքային անտառների ստեղծմանը և զարգացմանը.

38) ստեղծում է անտառային արդյունքի արտադրության և վերամշակման հզորություններ.

39) մշակում և իրականացնում է անտառօգտագործման, այդ թվում՝ հանգստի, զբոսաշրջության, էկոտուրիզմի զարգացման ծրագրեր.

40) աջակցում է ագրոանտառաբուծության զարգացմանը.

41) մշակում է անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհային անվտանգության միջոցառումների ծրագրերը.

42) սույն օրենսգրքով և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Բնապահպանական վերահսկողությունն իրականացնում է շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնինը:

Հոդված 7.1. ~~**Շրջակա միջավայրի պահպանության**~~**Էկո պարեկային ծառայությունը**

~~Շրջակա միջավայրի պահպանության~~Էկո պարեկային ծառայության լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Հոդված 4. ՈՒժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 26-րդ և 27-րդ հոդվածները:

Հոդված 5. ՈՒժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ (Կ-708-13.11.2023-ՏՏԳՇ-011/1)

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու

					վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Վերնագիր**	Օրենքի նախագծի վերնագրում նշված «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԷԿՈ ՊԱՐԵԿԱՅԻՆ» բառով:	Ընդունվել է Քանի որ շրջակա միջավայրի պահպանությունը իր մեջ առավել լայն (նաև օդ, ջուր, մթնոլորտ) շրջանակ է ընդգրկում, նպատակահարմար է համարվել «շրջակա միջավայրի պահպանության» բառերն իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «բնապահպանություն» բառով և իր	Ընդունվել է

				համապատասխան հոլովաձևերով: Վերոնշյալ առաջարկությունը վերաբերվում է նաև փաթեթին կից բոլոր իրավական ակտերում առկա վերոնշյալ ձևակերպմանը:	
2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 1-ին և 5-րդ**	**1-ին հոդվածի 1-ին մասում և** 5-րդ հոդվածի 3-րդ մասում **«**շրջակա միջավայրի պահպանության ծառայության» բառերը փոխարինել «էկո պարեկային ծառայության» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 16-րդ**	16-րդ հոդվածի 1-ին մասում «Շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխարինել «Էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ԱԺ պատգամավոր	**Հոդված 2-րդ**	2-րդ հոդվածի «և/կամ» բառերը փոխարինել «կամ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

	Վահե Ղալումյան				
5.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 4-րդ**	4-րդ հոդվածի 1-ի պարբերությունը համարակալել:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**3-րդ և 4-րդ գլուխներ**	Նախագծի 3-րդ և 4-րդ գլուխները միավորել և հաջորդ գլուխների համարակալման հաջորդա-կանությունը պահպանել:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 25-րդ**	Նախագծի 25րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «և/կամ» փոխարինել «կամ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	25-րդ հոդվածի 1-ին մաս	25րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ԱԺ պատգամավոր	25-րդ հոդվածի 2-րդ մաս	25-րդ հոդվածի 2-րդ մասի համարակալման	Ընդունվել է	Ընդունվել է

	Վահե Ղալումյան		հաջորդականությունը պահպանել:		
10.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	26-րդ հոդվածի 2-րդ մասում	26-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքի» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	հոդված 27-րդ	27-հոդվածը ներառել Գլուխ 9-ում:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	հոդված 32-րդ	32-րդ հոդվածի համարակալման հաջորդականությունը պահպանել:	Ընդունվել է	Ընդունվել է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 7.1-ին**	**7.1-ին հոդվածի վերնագրում և տեքստում** «Շրջակա միջավայրի պահպանության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարինել «էկո պարեկային» բառով:		
2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Վերնագիր**	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառից առաջ լրացնել «ԼՐԱՑՈՒՄ ԵՎ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 1-ին**	**1-ին հոդվածում «**շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Վերնագիր**	Նախագծի վերնագրում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 1-ին**	**1-ին հոդվածում բոլոր «**շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 1-ին**	1-ին հոդվածում օրենքի անվանումը լրիվ նշել:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդվածներ 1-ին և 2-րդ**	**1-ին և 2-րդ հոդվածներում «**Շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Վերնագիր**	վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ	Ընդունվել է	Ընդունվել է

			ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:		
3.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդվածներ**	հոդվածների համարակալումների հաջորդականությունը պահպանել:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 3-րդ**	3-րդ հոդվածի վերնագիրը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 2-րդ**	**2-րդ հոդվածում** «Շրջակա միջա-վայրի պահպանության» բառերը փո-խարինել «էկո պարեկային» բառով և «շրջակա միջավայրի պահ-պանության» բառերը փոխարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

2.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդված 3-րդ**	**3-րդ հոդվածի վերնագրում** «Շրջակա միջավայրի պահպանություն» բառերը փոխարինել «Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության և կիրառման նկատմամբ պետական հսկողության գործառույթներ» բառով, **3-րդ հոդվածում** «Շրջակա միջա-վայրի պահպանության» բառերը փո-խարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդվածներ 4-րդ և 5-րդ**	**4-րդ և 5-րդ հոդվածներում** «շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխարինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	ԱԺ պատգամավոր Վահե Ղալումյան	**Հոդվածներ 4-րդ և 5-րդ**	**4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 5-րդ հոդվածում** «Շրջակա միջավայրի պահպանության» բառերը փոխա-րինել «էկո պարեկային» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է